ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հոկտեմբերի 2012թ. N 435

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի բնակիչ Քնարիկ Հակոբյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Քնարիկ Հակոբյանին հատկացնել 100000 /հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն երեխաներին՝ Հայկ Հակոբյանին 50000 դրամ և Աշխեն Հակոբյանին 50000 դրամ ուսման վարձի վճարման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ.Կարապետյան /՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը համապատասխանաբար <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ի <<Արարատ բանկ>> ԲԲԸ հ/հ 1510002779480100 և <<Երևանի Պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի Արդշինինվեստ բանկ հ/հ 247010000906 հաշվեհամարներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ